Հայաստանի
Հանրապետության
կենտրոնական բանկ



ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

12. 12. 2023

Այսօրվա նիստում ՀՀ ԿԲ խորհուրդը որոշեց

վերաֆինանսավորման տոկոսադրույքը նվազեցնել 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 9.25%

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող **լոմբարդային ռեպոյի** տոկոսադրույքը՝ 10.75%

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից **ներգրավվող միջոցների** տոկոսադրույքը՝ 7.75%

2023 թ. նոյեմբերին 12-ամսյա գնաճը նվազել է՝ ամսվա վերջին կազմելով -0.5%: 12-ամսյա բնականոն գնաճը հոկտեմբերին կազմել է 0.0%:

Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)



Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական կոմիտե, Կենտրոնական բանկի վիճակագրություն

Արտաքին հատվածից ՀՀ տնտեսության վրա ակնկալվում են գնանկումային ազդեցություններ:

Չորրորդ եռամսյակում համաշխարհային և Հայաստանի Հանրապետության հիմնական գործընկեր երկրների տնտեսական ակտիվությունը շարունակում է դանդաղել: Դա արտահայտվում է միջազգային ապրանքահումքային շուկաներում գների և համաշխարհային գնաճի տեմպերի նվազմամբ:

Գնաճը գործընկեր երկրներում, 12-**ամսյա,** %



Նման իրավիճակում գործընկեր երկրների կենտրոնական բանկերն առաջիկայում կպահպանեն հարաբերականորեն զսպող դրամավարկային պայմանները:

Դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքի շարժընթացը զարգացած տնտեսություններում, %



Աղբյուրը՝ BIS, Երկրների կենտրոնական բանկեր

Չորրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետությունում պահպանվում է բարձր տնտեսական ակտիվություն

որին նպաստում են շինարարության և ծառայությունների ճյուղերի բարձր աճերը:

Արտաքին պահանջարկը դանդաղում է, իսկ ներքին պահանջարկը շարունակում է մնալ բարձր: Վերջինս հիմնականում արտահայտվում է մասնավոր սպառման բարձր աճով:

Առաջարկի բաղադրիչներ տ/տ աճ (2023)



Պահանջարկի բաղադրիչների նպաստումը տնտեսական աճին (2023)



Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրության կոմիտե, ՀՀ Կենտրոնական բանկի գնահատումներ

Արտաքին հատվածից թույլ գնանկումային ազդեցությունների և իրականացված զսպող դրամավարկային քաղաքականության պայմաններում պահպանվում է ցածր գնաճային միջավայր, ինչն արտահայտվում է նաև աշխատանքի շուկայում աշխատավարձերի աճի տեմպի և գնաճային սպասումների որոշակի նվազմամբ:

Մասնավոր հատվածի անվանական աշխատավարձ



Աղբյուրը՝ ՀՀ Վիճակագրության կոմիտե, ՀՀ ԿԲ

Գնաճային սպասումների և անորոշության կշիռը (ԿԲ հարցումներ)



	2021.4	2022.1	2022.2	2022.3	2022.4	2023.1	2023.2	2023.3	2023.4
Բարձր գնաճային սպասումներ	31.2	39.9	32.3	29.2	35.7	27.9	27.5	22.1	21.5
Անորոշություն	40.6	38.2	41.1	40.4	25.4	31.6	41.8	41.8	46.3
Ցածր գնաճային սպասումներ	28.2	21.9	26.6	30.5	38.8	40.5	30.8	36.1	32.2

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ

ԿԲ ԽՈՐՀՈՒՐԴԸ

… նպատակահարմար է գտնում նվազեցնել քաղաքականության տոկոսադրույքը

… հետևողական է լինելու համարժեք գործողություններով ապահովելու պահանջարկի կարգավորում և գնաճային սպասումների կայունացում:

Դրամավարկային քաղաքականության նախանշված սցենարում 12-ամսյա գնաճն առաջիկայում կպահպանվի նպատակային ցուցանիշից ցածր մակարդակում, այնուհետև աստիճանաբար կավելանա և միջնաժամկետում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

ԿԲ Խորհուրդը գնահատում է, որ նախանշված ուղեգծից գնաճի շեղման ռիսկերը հիմնականում հավասարակշռված են: Ռիսկերի որևէ ուղղությամբ դրսևորման պարագայում Խորհուրդը համարժեքորեն կարձագանքի և կապահովի գների կայունության նպատակը:



Աղբյուրը՝ ՀՀ Կենտրոնական բանկի գնահատումներ

Հայաստանի
Հանրապետության
կենտրոնական բանկ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Տոկոսադրույքի մակարդակի որոշման հիմքում ընկած մանրամասն տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ մինչև 2023թ. դեկտեմբերի 26-ը հրապարակվելիք Գնաճի հաշվետվությունում (Դրամավարկային քաղաքականության 2023թ. չորրորդ եռամսյակի ծրագրում):